# ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկայի համար տարեկան 4 տոլար թղթադրամ.
Եւրոպայի և այլ տեղերի համար տարին. 20 Ֆրանգ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնեգիները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդութիւններ ալ կընդունուին, առանց սակ յաւելման բաժնեգնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը (rue Vacon, 50) ամեն օր կէսօրէնյետոյ, ժամ 2 էն մինչև 4 վրայն։

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 80

1886 ՄԱՅԻՍ 26

(ՄԱՅԻՍ 14 Հ. Տ.)

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Կը հրատարակուի Գշ. և Երեք. օրեր

ԳԱՅՄԱՆՆԵՐ

Գանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Գանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, MARSEILLE (France)

*Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau dela Rédaction (Rue Vacon, 50).*


## ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փարիզի հայ գաղթականութեան 1886 թ Զատկական տօնը։—Նամակ Պուլկարիանն (Վառնա).—Նամակ Պուլկարիանն (Բուսմուզ). —Հայեր Յունգլիա. — Ֆրանսական լուրեր.—Տեղական.—Արեւելեան խնդիր. — Արտասահմանի լուրեր.—«Արմենիա»ի պատասխաններ.—Առեւտրական. —Գանուցումներ. — Բանասիրական (Լինչի օրենքը Տաճկահայաստանում):

## ՓԱՐԻԶՈՒ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ 1886 ԻՆ ԶԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԸ

Այս տարի ալ Հնորհիւ Մարսիլիոյ բարեպաշտ և ազգասէր գաղթականութեան՝ որոյ պարագլուխ կը հանդիսանայ միշտ Մեծ. Տիար Սելեան, Փարիզու Հայոց Զատկական ազգային տօն կատարեցինք և մեր ամենուս սիրելի Արժանապատիւ Տէր Սահակ Հօր մատուցած Սուրբ անմահ պատարագին ներկայ գտնուելու բաղդը ունեցանք խուռն բազմութեամբ։ Այս սրբազան և Աստուածահաճոյ առթիւ տարին անգամ մը Փարիզաբնակ հայերս դիրար տեսնելու երջանկութիւնն կունենանք։ Այս տարի երկուառիթ ևս ունեցանք ուրախառիթ տեսութեան և համակրալից յաճախմանն. նախ Սուրբ պատարագին օրը որ էր 9 Մայիս, Փարիզու Հայկազեան Ուսումնասիրաց Ընկերութեան եռամեայ Նիստը տեղի ունէր. ժամը 3 ին բազմաթիւ անդամք ներկայ էին ժողովոյ։ Ուրախութեամբ կը տեսնենք այս ազգօգուտ ընկերութեան յառաջադէմ վիճակը՝ Մեծ. Տիար Իսկենտէրի, Գ. Էգնայեանի, Ե. Թընկըրի և Խ. Հինքիարպէյենտեանի ջանից շնորհիւ։ Իւր այժմեան նպատակը թէև համեստ, բայց խիստ գործնական և օգտակար է, այն է Հայաստանի երկրորդական դասու վարժարանաց մէջ մէկ քանի տանեւրու կրթական ծախքերը հայթայթել ժողովքէն անմիջապէս յետոյ խօսք բացուեցաւ որ յառաջիկայ կիրակի, այսինքն մայիս 16 ին, ազգային ուխտադնացութիւն մը ըլլալի Սէն-Ցընի Լևոն վեցերորդ մեր վերջին թագաւորի շիրմին վրայ։ Մայիս 16 ին ժամը ճիշդ 3 ին Արժանապատիւ Տէր Սահակ Հայրը, երեւեցաւ Հայ արանց և տիկնանց խուռն բազմութեան մը գլուխ և ամենայն երկիւղածութեամբ դացին Լուսինեան Լևոն վեցերորդ տարեբաղդ թագաւորնուս գերեզմանը։ Հոն Պատուական հոգեւոր Հայրերնիս սրտառուչ հոգեհանգիստ մը ըրաւ... շատ մը օտարազգիք ալ համակրալից հեռաքրքրութեամբ կը դիտէին այս ազգային տեսարանս։ Ապա, Տիար Պրուսալի պատմագէտ և պերճախօս երիտասարդը ճառ մը խօսեցաւ գաղղիերէն լեզուաւ և Լևոն վեցերորդի կենսաբանութիւնն ընելէն ետև, ազգիս խիստ փափաքելի ապառութեանը վրայ խօսեցաւ, ըսելով ազատակոչ դպրոցներով, ազգափրկիչ ջանքերով փութացընել Հայոց փրկութեան չքնաղ և պանծալի օրը։ Այս հակիրճ դրութեան վերջ չի տուած, նաև մեծ բերկրութեամբ կիմացնենք որ նոյն օրերը երկու ուսումնասէր և աշխատասէր հայազգիք բժշկական փառաւոր քննութիւններ անցուցին. սիրելի է մեզ հոս տալել երկու հոգեհատոր բարեկամաց և ընկերաց անունները. մին Արժանապատիւ Տէր Սահակ Հօր ազգիս որդին Տիար Երուանդ—Ի թիւճեան Արշակունի և միւսը՝ Անդրիանուպոլսեցի Տիար Խանճեան—որոնց կը մաղթենք անընդհատ յաջող քննութիւններ մինչև ի կատարումն իրենց ուսմանցը։

Օ. ԹԻՒՑՍԻԶԵԱՆ

Տնօրէն «Ժողովրդական դրամատան»
51, Rue des Dames, Paris

## ՆԱՄԱԿ ՊՈՒԼԿԱՐԻԱՆ

Վառնա, Ապրիլ 20/2 Մայիս 1886

Վայրկենի մը մէջ յորում Եւրոպայնակ Հայեր կաշխատին միանալով Հայաստանի բարօրութեանը համար հայրենասիրական պարտք մը կատարելու, շատ զարմանալի է տեսնալ որ կը գտնուին դեռ մեր ազգին մէջ մարդիկ որ բոլորովին անտարբեր կը կենան այս գործին համար։ Եթէ հարցընես անոնց, փափաք ունի՞ք Հայաստանը ազատ տեսնալու. ուրախ պարզ է թէ ինչի՞։ ի՞նչ անենք, հարցրեց նա ընկերներին։

—Կորչի՛ մատնիչը, գոռացին բոլորը միաբերան, և արձագանքը, ամեհի ժայռերի արձագանքն էլ կարծես հազարաւոր բերանից և հազարաւոր կողմերից ահռելի ձայնով «կորչի մատնիչը» պատասխանեց։

—Բռնեցէք, տարա՛յք, մատնիչին և կապկպեցէք։

Մի ակնթարթում Կիրակոսի ձեռն ու ոտները կապուած էին։

—Այժմ արդէն լսեցէք իրողութիւնը..., և նա ծոցից հանեց մի ճմրթկուած թղթի կտոր. դա Կիրակոսի տեղեկագիրն էր փաշային ուղղած... բայց թէ ի՛նչպէս էր իւր ձեռքը անցել դա՝ ... այդ միայն ինքը գիտէր։

Բոլորն էլ ճանաչում էին Կիրակոսի ձեռքը. մատնութիւնը ակնյայտնի էր։

—Վերջացրէք դորա գործը, կրկին խօսեց երիտասարդը.— և շուտ վերադարձէք։ Ահա այնտեղ, վերը՝ դէպի աջ խոր անդունդը. գլորեցէք դէպի ցած. երևի շուտով (և այստեղ նորա դէմքը արհամարհական ծիծաղ արտայայտեց) իւր ընկերներին էլ կուղարկենք ետևից, միայնակ չի մնալ....։

(Շարունակելի)

Մ. Պ.

Թիւնն կունենանք։ Այս տարի երկուառիթ ևս ունեցանք ուրախառիթ տեսութեան և համակրալից յաճախմանն. նախ Սուրբ պատարագին օրը որ էր 9 Մայիս, Փարիզու Հայկազեան Ուսումնասիրաց Ընկերութեան եռամեայ Նիստը տեղի ունէր. ժամը 3 ին բազմաթիւ անդամք ներկայ էին ժողովոյ։ Ուրախութեամբ կը տեսնենք այս ազգօգուտ ընկերութեան յառաջադէմ վիճակը՝ Մեծ. Տիար Իսկենտէրի, Գ. Էգնայեանի, Ե. Թընկըրի և Խ. Հինքիարպէյենտեանի ջանից շնորհիւը։ Իւր այժմեան նպատակը թէև համեստ, բայց խիստ գործնական և օգտակար է, այն է Հայաստանի երկրորդական դասու վարժարանաց մէջ մէկ քանի տանեւրու կրթական ծախքերը հայթայթել ժողովքէն անմիջապէս յետոյ խօսք բացուեցաւ որ յառաջիկայ կիրակի, այսինքն մայիս 16 ին, ազգային ուխտադնացութիւն մը ըլլալի Սէն-Ցընի Լևոն վեցերորդ մեր վերջին թագաւորի շիրմին վրայ։ Մայիս 16 ին ժամը ճիշդ 3 ին Արժանապատիւ Տէր Սահակ Հայրը, երեւեցաւ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԼԻՆՉԻ ՕՐԷՆՔԸ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Պատկեր մօտիկ ապագայից)

(Շարունակութիւն 79 դ. թիւէն)

Բայց երիտասարդը չէր կանգնում, նա թէև արագ—արագ էր շնչում և արիւն քրտինք մտել, բայց և այնպէս և ոչ մի բոպէ առանց հանգստանալու և կարծես առ ոչինչ համարելով ճանապարհի դժուարութիւնները, դիմում էր իւր նպատակին... քարակոյտերին փոխարինեցին համարեա ուղղահայեաց ժայռեր. ո՛ւր ուրեք հաղիւ նկատելի և միմիայն այծեղջիւրներին մատչելի քանդուածներ էին երևում... բայց երիտասարդը յամառութեամբ բարձրանում էր՝ դիմհար տալով իւր հրացանի փողին...։ Վերջապէս նա հասաւ լեռան կիսին, նորա առաջ բացուեց մի մութը, խոր և նեղ ձոր թէ անդունդ, անմատչելի, սեպաձև ժայռերով շրջապատած...։ Այստեղ նա կանգնեց արդէն, և կարծես տատանման մէջ էր... մատները դրեց բերանին և պայմանական շվվոցը արձակեց։ Մի թոյլ կարծես գետնի տակից դուրս եկող սուլոց եղաւ նորա պատասխանը... նա այլ ևս չերկմտեցաւ և արագութեամբ իջաւ ցած։ Հաղիւ երբեմն ցայտող և մի ակնթարթ ժայռերն առկայծող լոյսը ցոյց տուաւ նորան՝ իւր ուսի տակ բացուած անյատակ անդունդը և նորից մնաց խաւարի մէջ։

Ներքևը ժէռայրի մէջ, պայծառ խարոյկի շուրջ դիզուած տասն տասն և հինգ հոգի խօսակցում էին. բայց դա երկար չէր քաշում և ստէպ լռում էին և ականջ դնում. յայտնի է որ մի բանի կամ մի ոքի են սպասում...

—Երևէ մի բան է պատահել. յայտնի անհանգստութեամբ ասում էր մինը.

—Պէտք է տեղեկանալ. նա երբէք անճիշդ չէր գտնուի, եթէ մի զօրաւոր արգելք եղած չլինի... սուլացնում է միւսը։

—Եկէք մի քանի հոգի գնանք...։ Հէնց այն է Մկօն, Վասոն ու Միխակը պատրաստվում էին վեր կենալու, որ վերևից լսուեց շվվոցը և բոլորի երեսը ուրախութեամբ փայլեց. բոլորի՝ բացի մինից, որը մի կողմ քաշուած, տխուր, ամբողջապէս եափունջու մէջ թաղուած կուռ էր եկել... դունթափ դէմքը, վըհատ աչքերը՝ որոնց երբեմնապէս գաղտուկ ձգում էր իւր ընկերների վերայ, ցնցումը՝ որ նա զգաց շվվոցի ձայնից—բոլորովին հակապատկերն էին կազմում միւս ընկերներին։ Մի՞թէ մի բանի մէջ իրան մեղաւոր էր զգում իւր ընկերների առաջ, մի՞թէ խղճմտանքն էր տանջում, կամ գուցէ յիշեց իւր սիրուհուն... ո՛վ գիտէ... ո՛վ գիտէ...

—Ուրախ եմ որ բոլորդ էլ այստեղ էք, ասաց նորեկ երիտասարդը, որը ինչպէս երևում է, խմբի առաջնորդն էր, և իւր արծուի աչերը արագութեամբ չորս կողմը ձգեց։ Բոլորը լռեցին. նորա խոժոռած դէմքը սհաւոր է այդ միջոցին։

—Փիչ էր մնում, որ ստոր մատնութեան զոհ լինէինք. այս օրուայ ժողովը ես գիտութեամբ այստեղ նշանակեցի, որովհետև այն «որը» (անտառ՝ ուր ժողովուել էին առաջին անգամ) այս բոպէիս արդէն պաշարուած է թուրք զինուորներով. մատնիչը ուշ իմացաւ այս վերջին վճիռս։ Ինչ և իցէ, այժմ, գոհութիւն Աստուծոյ, ամեն բան ուղղուեցաւ, շարունակեց նա, և իւր կողքի երկու հուժկու երիտասարդների ականջին մի բան փսփսաց։ Նոքա վեր առին ատրճանակները, չնիկները բացին և մօտեցան Կիրակոսին (այդպէս էր առանձին տխուր նստած երիտասարդի անունը)։ Բոլորի դէմքն էլ խորհրդաւոր և լուրջ արտայայտութիւն ստացաւ. Կիրակոսը կարծես տեղն ու տեղը սառեց։

—Ուշացայ, որովհետև պէտք էր մի քանի բան էլ կարգադրել... մեր միւս ընկերները քնած չեն. մատնիչը մեզանից մինն է, և նա պէտք է որ այսուհետև մեր մէջ չմնայ, բայց չպէտք է որ ազրի էլ.

նիմ կտեն. ունիմ բայց խելքս չհասնիր, ոչ կրնամ մտածել, ոչ աշխատիլ ոչ ալ զոհողութիւն մ'ընել տանկ գործի մը համար որ իմ դատողութեանս չվերաբերիր. ցաւալի է որ կայ այս բարոյական հիւանդութիւնը կարգ մը ուսեալ և պատուաւոր Հայոց մէջ որ կը պատանին Կ. Պոլսոյ մեր ազգային բարձր ընկերութեան։

Ինչ և իցէ· բնաւ չեմ ուզեր զանազանք մեղադրել թէ Հայրենասիրական պակութիւն մ'ունին, որովհետև այս տարիները դարերէ ի վեր գեռին ունեցած և արմատացած են մեր ազգին մէջ, մանաւանդ որ Հայրենասիրութիւն բառը մեր ազգին կեդրոնատեղւոյն մէջ իւր ճշմարիտ նշանակութեամբը ըմբռնուած չէ հասարակութեան կողմէն, ինչպէս նաև աղատութիւն բառը։ Երբ Յունիսի կարգը կուգայ, տանք Ջուրի պէս կը գործածուին, ամենքն ալ փիլիսոփայ կ'ըլլան, կը փայլին Հայրենիք իրութեամբ և աղատութիւն կը ճաչակեն։

Կ. Պոլսոյ Հայ երիտասարդութենէն միայն յոյս կայ որովհետև մեր դարու երիտասարդութիւնն է. նորա երբեմն Եւրոպիոյ մէջ տուած սիրելի արձագանքը ամեն տեղ համակրութեամբ կը լսուի և ամեն ճշմարիտ հայու ուշադրութիւնը կը դրաւէ։ Քաջասրտութիւն կը բարեմաղթեմք մեր սիրելի Պոլսեցնակ երիտասարդութեան, և հաստատ յարատևութիւն ի ծաւալումն համերաշխութեան ազգայ մեր արիւնակցայ մէջ։

Արդարև մինչև դարդ Օսմանեան մայրաքաղաքին մէջ շատ հայ հայրենասէրներ փայլած են, բայց կը տեսնուի որ հայկական հաստատ սկզբունք կամ ունեցած չեն կամ չեն կրցած ծաւալել ժողովրդին մէջ որ այս պատճառաւ վարժուած է իւր դերութեան զարդարանքները իբր հայրենասիրութիւն նկատել նա տեսած է հայրենասիրութիւն եկեղեցական ծառայութեանց մէջ, այս ինչ կամ այն ինչ հարուստի ազգային երեսփոխանութեան կամ անուանի փաստաբանութեան մէջ, հայ բաշայից կամ մեծ պաշտօնէից փառաց մէջ, այսինքն որանք որ կը վայելեն Սուլթանի բարձր շնորհքները իրենց սիրելիութեան և Տաճիկ լուծի հաճատարմութեան փոխարէն, ժողովուրդն ալ զանոնք բնականաբար սիրելով և մեծարելով, իւր հայրենասիրութիւնը թիւրք կառավարութեան ծոցին մէջ տեսած է և իւր սիրտը հոն կապուած է, ոչ թէ իւր ընկերական սկզբանցը մէջ, որոնք երբէք չեմ սխալիր, այս կերպով թուլացած են։ Ճշմարիտ հայրենասիրութիւն մը չկրնար մոլորիլ պայծառ և ընդարձակ ճանապարհի մը մէջ որ կը տանի ի կորուստ։ Այնչափ ժամանակէ ի վեր եղած յառաջադիմութիւնները չե՞ն մի որ որ այս փառաւոր ճամբան բռնած են և ոչ թէ Հայրենեաց ճամբան որովհետև նեղ է։ Եւ ասոր համար չէ՞ մի որ միակ մենք մնացինք բոլոր քրիստոնեաներէն արտաքսեալ ասիական հրէշի մը լուծը սիրելու և պատուելու։ Եթէ մեր ազգը ունի հայկական սկզբունք, չի պիտի համբերէ որ սահմանափակեալ տեսնայ միշտ իւր բոլոր ազգասիրութիւնը տանկ նեղ շրջանակի մը մէջ։

Քանի մը ամիս առաջ տեսութիւն մը կարդացի Կ. Պոլսոյ «Հայրենիք» լրագրին մէջ, որոյ Հայ ազգասիրութեան վերաբերեալ մասը համառօտիւ յառաջ կը բերեմ։

Օսմանեան կայսրութեան մէջ տիրող լի բարեկարգութեանց տեսլարդական և փառաւոր գովեստներէն ետքը, «Հայրենիք» ազգային թերթը կը յաւելու թէ Հայ ազգը խիստ գոհ է Տաճիկ կառավարութենէ և շնորհապարտ իւր Վեհափառ Սուլթանին, որ «արդէն կատարած է Հայոց «յառաջանի համար խոստացեալ բա«րենորոգութիւնները», և փա՛ռք Ն. Վ. բարեխնամ շնորհաց, հոն կատարեալ բարեկարգութիւն կը տիրէ· այս կրնան վկայել անոնք որ Հայաստանը կը ճանաչեն, այնպէս որ եւրոպական լրագրոց մէջ երբեմն Հայկական խնդրի վրայօք հրատարակեալ յօդուածները թշնամական ձեւքով կը գրուին և անիրաւ զրպարտութիւններ են։

Ահաւասիկ փութաջան ազգասիրութիւն մը.—Տաճիկ կառավարութիւնը կը խոստովանի որ չէ կատարած Հայաստանի բարենորոգութիւնները· Թուսիոյ կայսրը երբեմն նորա ուշադրութիւնը կը դրաւէ· մեր «Հայրենիք» լրագիրն ալ կը պօռայ որ բարենորոգութիւնները կատարեալ են։ Իբր ազգային օրկան մը այս թերթի գրածը բաւական պերճախօս է թէ ինչպէս կը հասկնան հայրենասիրութիւնը ինքը և իւր ընթերցողները, մանաւանդ որ Կ. Պոլսոյ պէս տեղ մը կը հրատարակուի. տարբ համար է որ հայ երիտասարդութիւնը հոն փոփուկ և մեծ դեր ունի կատարելու։

Երբոր Արևելեան խնդիրը կը յուզուի, քրիստոնեայ ազգերը հայոց կողմէն գործ կը սպասեն վասնզի կը հաւատան որ կարգը Հայաստանին է, Եւրոպայէն վաւերացեալ իւր իրաւունքները վայելելու համար· անոնք չեն գիտեր որ արդէն Տաճկաստանի մէջ հայք ապատեալ են (?)։ Ցիրաւի Տաճկաստանի մէջ հայերը ազգային գործերու վրայ ազատ գաղափարներ չեն կրնար գրել· բայց թերթ մը ազգին իրաւունքները պաշտպանելու և նորա բարոյական օգուտ մ'ընելու նպատակաւ կը հրատարակուի, ոչ թէ նորա իրաւունքները խեղդելու և ազգասիրութիւնը կուրացընելու համար։ Ամեն գործի մէջ շողոքորթութիւն չըլլար· թերթ մը պէտք է որ իւր սկզբունքը ունենայ· թէ որ չգիտէ խօսիլ պէտք է որ գիտնայ լռել անանկ ժամանակը մը մէջ որ միութիւն և հաստատ սկզբունք կը պահանջէ։

Սիթափի՛նք, հայե՛ր, ձգենք երևակայական փիլիսոփայութիւնները, միանամք և զօրանամք քաջութեամբ և եռանդով նայիմք դէպի մեր հայրենիք· կայ հոնատպարէզ մը մեր պատուոյն համար· ցուցընենք մեր բաղուկներով և մեր սրտերով թէ ճշմարիտ Հայկայ սերունդէն իջած մարդիկներ ենք և պատերազմինք համարձակ մեր ազատութեան համար· Տաճիկը Տաճիկ է, Եւրոպան ալ Եւրոպա է, փութամք մենք ալ հայ ըլլալու։

* * *

## ՆԱՄԱԿ ՊՈՒՎԿԱՐԻԱՆԷՆ

Բուսնուր, 2/14 Մայիս 1886

### ՔՍՏՄՆԵԼԻ ՈՃԻՐ ՄԸ

Քաղաքիս հասարակութիւնը յոյժ յուզուած է ոճրագործութենէ մը, որ իւր տեսակին մէջ եղական կրնայ համարուիլ, և որոյ քանի մը պարագայներն խիստ հետաքրքրաշարժ ըլլալով արժան կը համարիմ ներկայել զայնս ձեր ազնիւ ընթերցողաց։

Շուրջ ամիս ու կէս յառաջ, Տրապիզնի կողմերէն Լազ մը յանկարծ անհետացաւ քաղաքէս, ուր առևտրական գործերով կ'զբաղէր։

Նորա յանկարծական անհետացումն այլ և այլ զրոյցներու տեղի տուաւ, և այս առթիւ ոստիկանութեան բացած քննութիւնն ամէն մասամբ ապարդիւն մնաց։ Ոստիկանութիւնը բանտարկեց անհետացոյն ընկերներէն մին, իբր չարագործ. բայց ասիկա ոչ մի չափազանց խնդրոյն էական կէտին վրայ։ Իրաքանչիւր ոք այն համոզումը ունէր թէ գժբաղդ պանդուխտը կամ ոճրագործութեան մը զոհ դառնալ էր, և կամ յուսահատութեան վերջին միջոցին դիմելով անձնասպան եղեր էր։ Ուստի ամէնմարդ անհամբեր կսպասէր այս խորհրդաւոր խնդրոյ ելքին, երբ առաւօտ մը մարդու կտրուած գլուխ մը, թեւեր և ոտքեր—որ Հրէից թագի փողոցայ մէջ ափուած էին՝ եկան լոյս սրբուելէ խնդրոյն տեսակին վրայ։ Ոճրագործը ցրուելով զայնս հրէից փողոցին մէջ, կերևայ որ նպատակ ունեցեր է ոստիկանութեան կասկածը հրաւիրել Հրէից վրայ, և այնու իւր օձիքը ազատել արդարութեան ձեռքէն։ Այս առթիւ կը յիշեմ այն թուրքերէն առածը որ կըսէ «գուլա գաղ պէնիմ իչիւն, տէրին գաղ սէնին իչիւն (1)». և իրօք ալ ինք մատնուեցաւ, առանց կարենալ վասնզի ենթարկելու անմեղներ, և այսու անդամ մ'ևս արդարութիւնը իւր յաղթանակը տարաւ։ Ի տեսութիւն հանուեալ անդամոց, նոր և մանրախոյզ քննութեան մը ձեռնարկեց ոստիկանութիւնը, տունները և փողոցները պտտելով, բայց ոչինչ տեսնուած կամ գտնուած է. հետևաբար ստիպուեցաւ անդամ մ'ևս խուզարկել Սագրը Մուստաֆային տունը, որոյ հետ յարաբերութեան մէջ գտնուեր է եղեր սպանեալը, և թէև սճիրը դադրուելէ յետոյ անգամ մը խուզարկուեր էր տունը, բայց ոչինչ գտնուած էր։ Ոստիկանութիւնը դուռնէն ներս մտնելով կզգայ որ դարշահոտութիւնն ի կը բուրէ տան մէջ, իսկոյն տան ամեն կողմը կը խուզարկէ, բայց յանօգուտս· ոչինչ կայ, բացարձակապէս ոչինչ։ Յետոյ կը ձեռնարկէ փորել գետինները, և ի վերջոյ մառանը, որոյ վրայ ածուխ դիզած են եղեր. բաւական փորելէ յետոյ տակաւ առտակաւ դարշահոտութիւնը կը սաստկանայ։ Ոստիկանութեան տասնապետը ձեռքը գտնուած չամփուրով գետինը ծակտելով տեսեր է որ արդարև այդ կողմէ կը բուրէր դարշահոտութիւնը։ Պեղումը շարունակելով ընդհուպ երևան ելեր է դժբաղդ մարդուն դիակը, զոր իբր 3 կանգուն խորութեամբ տան հիմանմէջ դրած էին, անդամահատելով։ Իսկոյն ոստիկանութիւնը սպանելոյն դիակը առնելով և ոճրագործը և իւր մեղսակիցներ—երկու պարսիկ—ձերբակալելով ուղղակի ոստիկանութեան պաշտօնատունը կը տանի, ուր ամէն բան կը խոստովանին։

Կը կարծուի որ այս ոճրագործութեան շարժառիթն է իբր 100—120 ոսկին զոր կորզել ուզած էին մարդասպանք իրենց զոհէն։—Ոճրագործութեան այլ և այլ պարագայներու վրայ նախնական հարցաքննութիւնք եղած են. տարակոյս չկայ որ այս արիւնարբու գազանները իրենց արժանաւոր պատիժը պիտի կրեն յօրինակ այլոց։

ՀԱՅՈՐԴԻ

## ՀԱՅԵՐ ՕԱՆԳԼԻՍ

«Արմէնիա»ի ընթերցողներ կը յիշեն անշուշտ Մանչէսթրի անգլիական եկեղեցու եպիսկոպոսին վախճանումը։ Մայիս 18ին նորա յաջորդի Դեր. Մուրրհաուզ եպիսկոպոսին աթոռակալութեան հանդէսը կատարուած է քաղաքին Մայր եկեղեցուն մէջ։ Այս հանդէսի հրաւիրուեր է նաև Դեր. Սաքիսս Վ. Գարանեան, եկեղեցու դասին մէջ իրեն յատուկ պատուի մի տեղ պատրաստուելով։ Արարողութիւնը տարաբնոյ յետոյ, Դեր. Գարանեանը յոյն Արշիմանդրիտին հետ ներկայացեր է Եպիսկոպոսին, իրեն և իւր ժողովրդի կողմէն շնորհաւորութիւն մատուցանելու։ Եպիսկոպոսը շնորհակալութեամբ ընդուներ է իրենց ներկայութիւն և իրենց բարեմաղթութիւն։

Նոյն երեկոյ նաև քաղաքապետը մեծահանդէս ընդունելութեան մի երեկոյթ տուեր է ի պատիւ Եպիսկոպոսին, քաղաքային շքեղ պալատին մէջ. անդ ևս Դեր. Հայ Առաջնորդը, ինչպէս նաև մի քանի Հայ ընտանիքներ, հրաւէր ընդունելով ներկայ գտնուեր են։

---

(1) Գուբ փորէ ինձ համար, խորունկ փորէ քեզ համար։

## ՖՐԱՆՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Մայիս 23, կիրակի օր, Քօմիւնի անկման տարեդարձին առիթով, Փարիզի յեղափոխական խումբերն Բէր-Լաշէզի գերեզմանատունը գնացած և իրենց սովորական ճառախօսութիւններն արած են կառավարութեան և արդի ընկերական դրութեան դէմ։ Ոստիկանութիւնը զգուշութիւններ ձեռք առած լինելով, թոյլ չտրուեցաւ իրենց որ յեղափոխական կարմիր դրօշակներ պարզեն փողոցներին մէջ, այլ ինչ որ կուզեն թող խօսին գերեզմանի շրջապատին մէջ։ Որովհետև յեղափոխականները զանազան դրութիւնների բաժնուած և անհամաձայն են իրենց մէջ, չէին ուզած ամենքը միասին միևնոյն ժամին գնալ։ Յեղափոխականները գերեզմանատունէն դուրս եկնելէ յետոյ Կրաֆարի պարտէզին մէջ ալ մի միթինկ գումարած են ուր զանազան դրութեան պատկանողներն իրարու դէմ խօսելնուն համար անկարգութիւններ յառաջ եկեր են և ոստիկանութիւնը պարտաւորուեր է միջամտել և հանդարտեցուներ։

—Վիքթօր Հիւկօի մահի առաջին տարեդարձին առիթով, շաբաթ և կիրակի օր մեծ բազմութեամբ ուխտագնացութիւն եղած է Բանթէոն, Վիքթօր Հիւկօի գերեզմանին։ Բազմութիւնը այցելած է նաև Վոլթէրի, ԺԸ դարի այդ մեծ փիլիսոփայի շիրմին որ կը գտնուի այնտեղ։

## ՏԵՂԱԿԱՆ

Արուեստագիտական ցուցահանդէսը որ պատրաստութիւններին պատճառով յետաձգուած էր, կը բացուի մայիս 29 ին։ Ցուցահանդէսը զետեղուած է Քօլոդէր փողոցը։

—Կիրակի օր Վալէթի թատրոնին մէջ մի միթինկ գումարուեցաւ բողոքելու համար արմատիքների և մեի վրայ տուրքեր աւելցուցնելուն դէմ։ 2000 անձ ներկայ կը գտնուէին։ Պուշ-Տիւ-Ռօնի երեսփոխաններէն Պ. Պ. Քլովիս Հիւկ և Անդիա Պուայէ ևս ներկայ կը գտնուէին։ Որոշուեցաւ 1. Հրաւիրել նահանգիս երեսփոխանները որ աղդուապէս բողոքեն այդ տուրքերի դէմ։ 2. Դրօշակներուն մի պատուիրակութիւն ղրկել Փարիզ որ աշխատի այս նպատակի համար։ 3. Դիմել նահանգապետին և խնդրել որ միթինկի այս որոշումներ հաղորդէ Փարիզ Պ. որ Ֆրեյսինէին։

Բազմութիւնը հանդիսաւոր բայց հանգարտ ոգիով դիմեց նահանգապետութեան ապարանքը և այդ երդրդ որոշում կատարեց մի պատուիրակութեան միջոցով։ Պ. նահանգապետը խոստացաւ դրժադրել։

—Խեղակորցեալների ապաստանին տեսուչ վախճանեալ Պ. Քարթուի տեղ յաջորդեց Տօքթէօր Տլպիէֆ։

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

Թուրքօ-հելլենական վէճը հակասական երևոյթներ կը ներկայէ ամենօր։

Ինչպէս շաբաթ օր հրատարակած էինք, Թիւրք յառաջապահ զօրքերը մայիս 21 ին յարձակումներ արած էին յունական նախապահնորդ զօրքերին վրայ և հեռևապէս փոխադարձ յարձակումներ տեղի ունեցած էին Քաբիսի դաշտին երկայնութեամբը սահմանագլխին վրայ։ Այս լուր Աթէնքի մէջ տարածուածին պէս, ցոյներ սկըսան կասկածիլ թէ Թիւրքիա հեռեւելով Պիսմարք իշխանի խորհուրդին (տեսնել «Արմէնիա» թ. 74), կը յարձակի Ցունաստանի վրայ։ Սակայն Բ. Դուռը խմացուց մեծ պետութիւններին թէ այդ յարձակումներ Թիւրիմացութեան արդիւնք են եղած և թէ խիստ հրամաններ ղրկուած են օսմանեան բանակի հրամատար Էյուպ փաշային որ իրեն տրուած հրահանգներէ դուրս չելնեն զօրքերն և պաշտպանողական գիծի վրայ մնան։

Թիւրք և յոյն հրամատարները միասին մի տեղեկագիր խմբագրեցին թէ այս խառնակութիւն Թիւրիմացութենէ յառաջ եկած էր և թէ Թիւրք զօրքերը մի ոտնախմբութեան առիթով չափազանց խոնած և ի նշանակ ուխտութեան հրացան արձակած էին։

Այնու ամենայնիւ, ցոյն կառավարութիւնը որ պրոշած էր զօրքերն վերադարձուցնել իրենց տեղեր. զգուշութեան համար հարկ համարեց օգնական զօրքեր ղրկել Թեսալիա։ Թէև Կոնթոսի նեղուցը պաշարման գծին մէջ չէ համարուած, բայց պետութիւնների նաւերը թոյլ չտուին որ Կոնթոսէն փոխադրեն զօրքերն Բալաքսիտի ուրիշ մի ճանբայ կը տանի Թեսալիա։

Թէև երկու զօրաբանակների հրամատարները բանակցութեան մէջ են այժմ որոշելու համար մի անգամ ընդ միշտ երկու բանակների դիրքը որ անկարգութիւններ յառաջ չգան, բայց միևնոյն ժամանակ դարձեալ այս կամ այնտեղ Թիւրք և յոյն զօրքերն կը զարնուին իրարու։ Մելունայի սահմանագլխին վրայ մայիս 22 ին, երեկոյեան ժամ 4ին, Թիւրքեր դարձեալ յարձակեր են յոյն զօրքերի վրայ, Թիրնավօի մօտ։ Ցոյներ ալ փոխադարձն ըրեր են իրենց և յետ մղելով Թիւրքերին մի քանին գերի բռներ են։ Հրացանաձգութիւնը տևեր է մինչև երեկոյեան ժամ 9։ Ցոյների կողմէն 3 անձ մեռեր են։

Աթէնքի մէջ մի տհաղին բազմութիւն խռնուելով Թագաւորի պալատին առջև պօռացեր են «կեցցէ՛ պատերազմ»։ Զիաւոր զօրքեր ցրուեր են բազմութիւնը։

Հեռեւեալ առաւօտ, Թիրնավօի դէմ, Բրիցօվալիի մէջ, նորէն սկսեր են թշնամութիւնները։

—Մայիս 24ին Աթէնքէն եկած հեռագիրները կը յայտնեն թէ թշնամութիւնները դադրած են և թէ այդ կռիւներ անձնական դրգռութիւններէ յառաջ եկած էին որոնք առանձնացած դիրքի մէջ գտնուող նախապահնորդ զօրքեր իրարու ուղղած են և թէ պաշտօնական հանդամանք չունին։

Պաշտօնական լրագիրը Թագաւորին մէկ հրովարտակը հրատարակած է որ կարձակէ պահեստի զօրքերէն հինգ կարգ։

Էյուպ փաշան և զօրավար Սապունձաքիի մէջ համաձայնութիւնը կատարեալ է և թէ նոյն օր իրենց ունենալիք տեսակցութեան մէջ մի միջոց պիտի գտնեն նոր կռիւների առաջն առնելու։

Այս ամենայնիւ, նոյն երեկոյ եկած մի հեռագիր կիմացունէ թէ գիշերը Քրիձօվօի մօտ դարձեալ կռիւ է պատահեր եղեր։ Թիւրքերը յետ մղուեր են։ Երկու կողմէ ալ ծանր կորուստներ եղեր են։ Ցոյների կողմէն բազմաթիւ սպայներ վիրաւորուեր և մեռեր են։ Օրիս հրամատարը մահացու հարուած է ստացեր։

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Թիւրինէն (Իտալիա) կը հեռագրեն մայիս 24ին թէ ժողովուրդը մի մեծ յուզում հաներ է Քոնվէրսանօի մէջ։ Հեռագրական հաղորդակցութիւնները խզեր և նահանգապետութեան ու քաղաքապետութեան ապարանքները և թատրոնը կրակի տուեր են։

—Պրիւքսէլէն (Պէլժիդ) կիմացուցնեն թէ մի քանի տէրութիւններ, մասնաւորապէս Ալմանիան, կուզեն միջամտել որ թոյլտուութիւն չտրուի այն մեծ ցոյցի որ ընկերվարականները որոշած են ընել յունիս 13 ին, Հոգեգալստեան օրի օրը։ Պէլգիոնի կառավարութիւնը դժգոհութիւն յայտնելով Պէլժիդի կառավարութեան բռնած ընթացքին վրայ, ըսեր է եղեր թէ չէ կարող հասկնալ թէ ինչո՞ւ համար արդիլելու կարգադրութիւններ չեն լինիր։

### «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Շումլա.—Ց. Ղ. Ձեր նոր բաժնորդագրութիւն սկսած է մայիս մէկէն։

Քասնիբօր.—Ց. Կ. Ղրկեցինք ձեզ 1 օրինակ «Գամառ-Քաթիպայի բանաստեղծութիւններ»էն և անցուցինք 2 Ֆր. ձեր հաշուի։

Ռուսճուգ.—Տ. Մ. Ս. Ղրկեցինք ձեզ այսօր մի նամակ որի մէջ են ընկալագիրները։

Գանիրէ.—Բ. Ա. Կ. Բաժնորդագիրն կարող էք ուղղակի ղրկել խմբագրութեանս Ֆրանսական փոստով կամ Քրէտիի Լիոնէ պանդոխի վրայ մի։ չէք առնելով և կամ թէ Վանցի Մեծ. Պրն. Յակոբ Փէհրիզեանի միջոցով։

Փարիզ.—Ճ. Ս. Ձեր նամակի պատասխանն ստացանք։ Մայիս 15 ին ղրկած ծրարնիդ չէ հասած իւր տեղ։

Մօնպելիէ.—ԿՈՒԱՆ. Ղրկուած թղթակցութիւնները չուտ հրատարակուելու համար, պէտք է որ ամիսի և կարճ գրուած լինին։ Մեր գրաշարական պայմաններ թոյլ չեն տար մեզ 5 սիւնակներէ բաղկացած մի յօդուած թ. 10 մանր տառերով հրատարակել մէկ անգամէն։ Ուրեմն ներողամիտ եղէք եթէ մի քիչ ուշացուցնենք։ Արդէն այնչափ յօդուածներ կան դիզուած որ եթէ շաբաթն 3—4 թերթ ալ հրատարակենք, կրնան լեցուցնել։

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

### ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՅԻՍ 18ԷՆ 25

ՆԵՐԱՇՈՒՔԻՆ

==

ԲՈՒՐԴ. Այս շաբաթ հրապարակը բաւական ոգևորութիւն ստացած է։ Վաճառումնց քանակութիւնը կը հասնի 1500 հակի, որմէ 430 հակը Քէօսթէնճէի ապրանք 110 ֆ.ը 100 քիլօն, մնացածները զանազան տեսակներէ։

ԲԱՄԲԱԿ. Հրապարակը շատ թոյլ է և խիստ քիչ վաճառումներ կըլլան։ Գիները Ատանա, Թարսուս 50–52½ ֆր. Զմիւռնիա 54–58 ֆր. Պարսկաստանի ապրանքները 45 ֆր. 50 քիլօն։

ՄԵՏԱՔՍԵՂԷՆ. Մետաքսի վրայ գործերը սահմանափակ են, սակայն տէշէներու վրայ պահանջ ըլլալով ամեն տեսակներն ալ լաւ արժանեաց կը վաճառուին։

ՑՈՐԵՆ. Հրապարակի թուլութիւնը կը յարատևէ և օրուան գիները ըստ տեսակին 15–18½ ֆր. 100 քիլօն։

ԿԱՆԵՓ. Պահանջ կայ։ գորշագոյնները 56–58 ֆր. և ճերմակները 62–66 ֆր 100 քիլօն։

ՎԱՐՍԱԿ (avoine)· Ըստ տեսակին 12–14 ֆր· 100 քիլօն։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ (maïs)· 12½–12¾ ֆր· 100 քիլօն։

ԼՈՒԲԻԱ· Անգործ վիճակի մէջ է, Տրապիզոնի մաքրուած տեսակները 22½–23 ֆր· 100 քիլօն։

ԹՈՒՋՆԱԿԵՐ (alpiste)· 24–25 ֆր. 100 քիլօն։

ՇՈՒՇՄԱ (sésame). 3s7½–38½ ֆր· 100 քիլօն։

ԽԱՇԽԱՇ· Գործ չըլլար, անուանական գին 27 ֆր· 100 քիլօն։

ԿՏԱՒԱՀԱՏ· Ապրանքի պակասութենէն պատրաստներու համար պահանջը աւելցաւ, 29 ֆր· 100 քիլօն։ Սակայն այս պահանջը կերևի 15–20 օր միայն տևողութիւն պիտի ունենայ, այսինքն մինչև Հնդկաստանի ապրանաց հասնիլը։

ԿԱՂԻՆ. Կոտրածը 82–83 և չը կոտրածը 37 ֆր. 100 քիլօն։

ԾԻԲԱՆԻ ԿՈՒՏ· Ըստ տեսակին 58–65 ֆր· 100 քիլօն։

ԴԵՂՆԱՀԱՏ. Ըստ տեսակին 95–110 ֆր· 100 քիլօն։

ՄԵՂՐԱՄՈՄ. 150–155 ֆր· 50 քիլօն։

ԱՑԾԻ ՄՈՐԹ. 20–28 ֆր. տուդինան։

ԱՐՏԱՍՈՒԹԻՒՆ

==

ՇԱՔԱՐ. Թոյլ է, 3 քիլանոցը 49 և 2 քիլանոցը 50 ֆր· 100 քիլօն։

ՍՈՒՐՃ· Բիօի ապրանքները ըստ տեսակին 45–56 ֆր· 50 քիլօն։

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ· Ճերմակները 3, 30–3, 50 և սևերը 3, 40–4 ֆր. քիլօն։

ՊՂՊԵՂ· Սենկաբօրի ապրանքները 87 ֆր· 50 քիլօն։

Գ.

## ԾԱՆՈՒՅՑՈՒՄՆԵՐ

### ԳԱՄԱՌ-ՓԱԹԻՊԱՅԻ

### ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
«Թիֆլիզի հայ. զրք. հրատարկ. ընկերքե.»

==

*Մեծանուն բանաստեղծ Գամառ-Փաթիպայի (Ռ. Պատկանեանց) ոտանաւորները պարունակող մի գիրք է 176 երեսներէ բաղկացած։ Սկիզբը դրուած է հեղինակին պատկերը։ Գամառ-Փաթիպայի բանաստեղծութիւններէ մի քանին արդէն ծանօթացուցած լինելով մեր ընթերցողներին, աւելորդ կը համարինք գրել այդ մասին։*

*Կը ծախուի «Արմենիա» լրագրի խմբագրատունը ի դին 1 ֆրանգ և 75 սանթիմի։ Մարսէյլէ դուրս ամեն տեղի համար 2 ֆրանգ փոստի ծախքովը հանդերձ։*

## ԱԶԴ

«Արմենիա»ի բաժնորդ գրուիլ յանկայողներին դիւրութեան համար, որոշեցինք նոր բաժնորդագրութիւններն ընդունիլ իւրաքանչիւր ամսի մէկէն սկսելով։ Նախորդ թիւերն կը ղրկուին անոնց միայն որք յատկապէս փափագ կը յայտնեն։

### ՄԱՆՈՒԷԼ ՄԻՐԱՆՈՐԵԱՆ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅԱԲՆԱԿ ԳԱՒԱՌՍ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ

### ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՍԱՐԼԷՆ ԵՒ ԶՈՐԼԷՆ ՀՆԷՆ ԵՒ ՆՈՐԷՆ ՊԻՏԱՆԻ ԳԻՏՆՈՑ

==

Մասն Ա. Բ. Գ. (առարտ)

*Հայաբնակ գաւառաց ընդհ. նկարագրութիւնն, տեղագրութիւնն, աշխարհագրութիւնն, շէն և ամայի վանօրէից նկարագիրն, ազանդութիւնք և այլ նիւթեր պարունակող Աղգ. գործ մի է, ամենակարևոր և հետաքրքրական գրուած շրջահայեաց և շատ նուրբ տեսութեամբ արժանի ամեն Հայու յանախակի վերծանութեան։*

*Կը գտնուի բոլոր գրավաճառաց քով. կեդրոնատեղին է Պօլիս ՊահՀէ-գափու հայագործի փառանդէմ Գ. էֆ. Ճոնեանի վաճառատունն, թիւ 11։*

*Գին — Ա. և Գ. մասերն 8 ական, իսկ Բ. մասն 10 դահեկանի։*

*Վարժարանաց համար գոհացուցիչ զեղչ կը լինի, և յանձնարարութիւնք ճշդիւ կը կատարուին։*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԳԻՒՅԱԶՆՈՒՀԻՄԸ գին 50 սանթիմ.
Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻ » 20 »

Այը ծախուին Մարսէյլ, «Արմենիա» լրագրի խմբագրատունը։

Ծտար քաղաքացիներին կը ղրկուի փոստով, եթէ վերոյգրեալ գիներով Ֆրանսական, բրբական կամ ռուսական փոստի թղթադրոշմ դրկեն «Արմենիա»ի խմբագրութեան։

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՐ Ա.

Կենդանային հիւսուածաբանութիւն եւ մարդկային կազմախօսութիւն ու բնախօսութիւն։

Աշխատասիրեաց Ն. Տաղաւարեան

*Հայերէն բնական պատմութեան մը անհրաժեշտ պէտքն ի վաղուց անտի կը զգացուէր։ Դոհութեամբ կը տեսնենք որ Պրն. Տաղաւարեան կաշխատասիրէ լրացնել այդ թերութիւնը, հրատարակելով այս կարևոր գործը, որ կը բաղկանայ չորս ստուար հատորներէ։ Ա.—Կենդանային Հիւսուածաբանութիւն եւ մարդկային կազմախօսութիւն ու բնախօսութիւն։ Բ.—Կենդանաբանութիւն։ Գ.—Բուսաբանութիւն։ Դ.—Հանքաբանութիւն եւ Երկրաբանութիւն։ Մէն մի հատոր պիտի բաղկանայ 35 մեծադիր ութածալ թերթերէ, պարունակելով 350 է աւելի գեղեցիկ պատկերներ։ Առաջին հատորի հրատարակութեան արդէն ձեռնարկուած է և առաջին տասն թերթերն լոյս տեսած են։ Այս հատորն իւր վերջը պիտի ունենայ նաև 1000 գիտական բառերէ բաղկացեալ բազմալեզուեան բառարան մի և գինը պիտի լինի 40 ղրշ։ իսկ կանխաւ իրը բաժանորդ վճարողաց համար 30 ղրշ։ Բաղմաթիւ օրինակ գնողաց համար մասնաւոր զեղչ կը լինի։ Իւրաքանչիւր թերթի գինն է 70 փարա։ Կեդրոնատեղին է «Գիտական Շարժման» անունակը, Կ. Պոլիս, Մէրճան, Գալաթա—Գումրու խան։ կը գտնուի նաև Թրէնկեան վաճառականացը, Պիպէռեանի գրասենեակը, Աբսլանեանի թղթավաճառանոցը, և Պահչէ Գափուի ջրավաճառաց քով։—*

## BIBLIOGRAPHIE

LA TRIBUNE DES PEUPLES

Revue internationale du mouvement social dans les cinq parties du monde.

ADMINISTRATION :

LIBRAIRIE DES DEUX MONDES, Paris, 17, rue de Loos.

Abonnement d'un An :
France, 5 francs. Extérieur, 6 francs

SOMMAIRE :

du deuxième numéro (Mai 1886)

A nos abonnés et lecteurs.— L'Administration.
Pourquoi sommes-nous anarchistes ? ? — Elysée Reclus.
La révolution dans l'éducation. — Cassius.
Les paysans au Japon. — Metchnikoff.
La transfusion, suite et fin...
Le chauffage des villes par le feu central. — Cassius.
Mouvement social international.
EUROPE. — Observation générale. France, Belgique, Espagne, Portugal, Bulgarie, Russie, Arménie.
ASIE. — Chine, Perse.
AMERIQUE. — Etats-Unis, Haïti, République Dominicaine, Canada, Cuba, San Salvador, Venezuela, Equateur, Guatemala, Mexique, Nicaragua, Costa-Rica, Colombie.
AFRIQUE. — Maroc, Tripolitaine, Egypte.

*Revue Bibliographique Internationale*
Livres, Journaux, Revues

Nous ne saurions trop engager nos lecteurs à s'abonner à cette intéressante revue dont un numéro à titre d'essai est envoyé *gratis et franco* à toute personne qui en fera la demande à la LIBRAIRIE DES DEUX MONDES, Paris, 17, rue de Loos, avec le *Bulletin* donnant l'analyse des publications en vente à cette librairie.


## A. H. CREET & C° .,

CAWNPORE, EAST INDIA

GENERAL MERCHANTS, COMMISSION AGENTS AUCTIONNEERS, HALF-MOUNTING CONTRACTORS, AND" MANUFACTURERS AND IMPORTERS OF

GENERAL AND LEATHER GOODS.

As French Goods always find ready sale in India, French manufacturers wishing to obtain a large and flourishing market like Cawnpore for their articles, are requested to use our experience in business. We have large Sale Rooms, and we charge Commission 10 per cent. or according to terms of agreement.

In exchange for Goods, or on Trader's ow account, we can supply at market rates Country Produce to any extent and in the shortest time possible. On notice being received, we will ship through our Calcutta and Bombay Agents the followinh : —

SEEDS, EDIBLE GRAINS, FABRICS, FIBRES, OILS, LAC, SUNDRIES

## JOHN SARKIS

PAPASIAN

PAPETERIE — LIBRAIRIE

Magasin de Musique

RUE FRANQUE, PASSAGE CRAMER, 1

SMYRNE (Turquie d'Asie)

Fournitures pour Consulats, Agences, Bureaux, Écoles, etc.

Articlies pour Photographes ,peintres et ingéneurs.

Cartes Géographiques et maritimes, Plans de Smyrne et photographies (vues) de différentes villes de l'Asie-Mineure.

Reliure en tous genres, et Commissoins de travaux d'imprimerie.

Tablaux, Corniches, Baguettes. *Encadrements* avec soin et précision.

*Grand assortiment de Musique* des plus renommés éditeurs et *Seul Dépôt* des éditions économiques de Ricordi, Peters et Litolff.

Instruments à Cordes, Pupitres-musique, Cordes pour Violon, Guitarre, Mandoline et Piano des meilleures fabriques d'Europe, etc.,etc.

**On se charge de toutes sortes de Commissions.**

## Mon AD. GODCHAU

*Habillements pour Hommes et Enfants*

La Maison possède deux Grands Établissements de Détail :
**l'un, 12, Faubourg Montmartre, 12**
**l'autre, 75, Rue de Rivoli, 75**

*Pour la Grande Ouverture de la Saison d'Hiver, la* **Mon AD. GODCHAU** *met en Vente des séries exceptionnellement avantageuses, dont ci-dessous quelques extraits :*

**PARDESSUS POUR HOMMES**
15fr. 20fr. 25fr. 30fr. 40fr. 50fr.

**COMPLETS POUR HOMMES**
35fr. 45fr. 60fr. 70fr.

**HABILLEMENTS DE CÉRÉMONIE**
28fr. 40fr. 50fr. 70fr. 80fr.

**ROBES DE CHAMBRE**
11fr. 15fr. 22fr. 30fr. 40fr.

**COSTUMES POUR ENFANTS**
5f50 10fr. 14fr. 22fr. 28fr.

**COMPLETS JEUNES GENS**
26fr. 30fr. 38fr. 42fr.

**PARDESSUS POUR ENFANTS**
5f50 10fr. 14fr. 22fr. 28fr.

*Rayons Spéciaux*
de VÊTEMENTS sur MESURE
pour Hommes & Enfants

*Nous rappelons que la :*

Mon AD. GODCHAU HABILLE AUSSI BIEN que les GRANDS TAILLEURS.
Mon AD. GODCHAU est connue pour vendre le meilleur marché du quartier.
Mon AD. GODCHAU échange ou rembourse les Vêtements ne convenant pas.
Mon AD. GODCHAU est connue et estimée comme MAISON DE CONFIANCE.
Mon AD. GODCHAU vend ses articles en détail au MÊME PRIX QU'EN GROS.
Mon AD. GODCHAU GARANTIT ses produits qui sont de PREMIER CHOIX.

Envoi FRANCO en province à partir de 25 fr.

## INSECTICIDE BOUVAREL

**Comme une bonne étoile**

ce produit merveilleux a paru dans les nuits souvent si sombres des pauvres souffrants, et leur apportait soulagement et consolation, et quand on lit les témoignages sans nombre que les Pilules Suisses ont obtenus on le comprend. La vente d'un million et demi de boîtes par an dit tout «Veuillez m'envoyer une boîte de vos Pilules Suisses à 1 fr. 50. Je m'en trouve très bien, je ne souffre plus. Mauvais appetit, conséquence naturelle d'un estomac délabré, tout a disparu par l'usage de vos Pilules Suisses. Inutile d'ajouter que je vous autorisé à publier ma lettre.
«Mme Felice FORTIN-LANGET, à Sanchillon (Loiret)»
A. M. Hertzog Pharm., 28, rue de Grammont, Paris.



ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
*Le Gérant* : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.